



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 մայիսի 2014 թվականի N Մ- 394 -Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-984-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇԻՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 28-ի N 3/3.8-2/6491-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N ՖԲ/ԱնՄ-4/2895-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N ԱՄ/22/4082-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՎՄ/3-4/5181-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 29-ի N 01/1975-14 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Իտալիայից «ՊՐՈԶԱ» բարեգործական կազմակերպության կողմից «Սուրբ Կամիլո» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (1,837 արկղ, 34,941.55 կգ ընդհանուր քաշով, 77,083 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 9,000 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Շիրակի» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 21-ի «Սուրբ Կամիլո» բարեգործական հիմնադրամի կողմից 2013-2015 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-984-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ